600.0003.13.01.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունվարի 2021 թվականի №3Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի №310Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԷՅՉ ԷՅՉ ԴԻ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի դեկտեմբերի 16-ի և դեկտեմբերի 25-ի գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 44 օրով երկարաձգել Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 21-ի №310Ա որոշմամբ «ԷՅՉ ԷՅՉ ԴԻ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Պարտիզակ-2» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0655 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0655 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը: Ընկերությունը հայտնել է, որ Կայանի կառուցումը ԼԷ №0655 լիցենզիայով սահմանված ժամկետում հնարավոր չի եղել ավարտել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողությունների պատճառով: Մասնավորապես, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից ձեռնարկված ռազմական գործողությունների ժամանակ խաթարվել են կապալառու կազմակերպությունների աշխատանքը, քանի որ նրանց պատկանող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները բանակի կարիքների համար տրամադրման հետևանքով կասեցվել են Կայանի կառուցման աշխատանքները, որին էապես խոչընդոտել է նաև շինարարություն իրականացնող կազմակերպության մի շարք աշխատակիցների զորակոչման հանգամանքը, և նշվածի

պատճառով հիմնականում դադարեցվել են նաև նյութերի և ապրանքների մատակարարումը: Ելնելով նշվածից՝ Ընկերությունը խնդրել է ԼԷ №0655 լիցենզիայի պայմանների չկատարումը համարել ֆորս մաժոր և ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցել,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

- 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի,

գ) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, գտնում է, որ ԼԷ №0655 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը ենթակա է երկարաձգման Ընկերության կողմից հայցվող 44 օր ժամկետով, իսկ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա չէ փոխանցման, քանի որ ԼԷ №0655 լիցենզիայի պայմանների չկատարումը հետևանք է ֆորս մաժորի: Մասնավորապես, Կայանի կառուցման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելուն խոչընդոտել են սույն թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից ձեռնարկված ռազմական գործողությունները, դրանցով պայմանավորված՝ կապալառու կազմակերպություններին պատկանող շինարարական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների զինված ուժերի կարիքների համար հանձնման և Կայանի շինարարության աշխատանքներին ներգրավված մի շարք աշխատակիցների զորակոչման հանգամանքները, որոնք որևէ կերպ չէին կարող գտնվել Ընկերության վերահսկողության ներքո կամ կանխվել վերջինիս կողմից, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Քառասունչորս օրով երկարաձգել Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 21-ի «ԷՅՉ ԷՅՉ ԴԻ ՍՈԼԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Պարտիզակ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №310Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Պարտիզակ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0655 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2021 թվականի հունվարի 15-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի փետրվարի 28-ը» բառերով:
2. Ընկերությանը՝
   1) ԼԷ №0655 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Պարտիզակ-2» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել 3 000 000 (երեք միլիոն) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2021 թվականի ապրիլի 14-ը գործողության ժամկետով.
   2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 15-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
13 հունվարի 2021թ.